

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարեկան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տ է լ է ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է ֆ օ ն № 253.

Հ ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Ր Դ Ս Ա Ր Ի

Եղիսաբէթ խաչատրեան, Մարթա Բարսեղեան և Մեղքօն Սարգս-
եան Գիրքի դեանները խորին ցաւով յայտնելով՝ առաջինը իր անմուսնայի ա-
մուսնու, երկրորդը իր սիրելի որդու և երրորդը թանգազին եղբոր՝

Ա Ս Տ Ո Ւ Ա Շ Ս Տ Ո Ւ Ր Ս Ա Ր Գ Ս Ե Ա Ն Գ Ի Ր Գ Ի Դ Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 4-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին
չնոր՝ բերել յուզարկաւորութեան, ներկայ ամսի 9-ին, կիրակի օր, առաւօտեան 9 ժա-
մին, Վոլոդայի փողոց № 31, սեփական տուն դէպի Վանքի մայր եկեղեցին, և այն-
տեղից Վերայի հայոց գերեզմանատուն:

Ամբիճը ուրբաթ և չորաթ օր, ամսի 7 և 8-ին երեկոյեան 6 ժամին:

(Կ. Շ.)

1—2

Եղիսաբէթ, Թէոդորոս, Տիգրան, Ալեքսան, Օլգա և Սելիսա-
բէթ խաչատրեան ցնեւրը, ցաւով յայտնելով՝ առաջինը իր սիրելի որդի,
երկրորդը իրանց թանգազին եղբայր, չորրորդը իր եղբորորդի և վերջինները իրանց
անսիրտարիները տալով՝

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Թ Ա Ր Ո Ւ Թ Ի Դ Ե Ա Ն Ի Ս Ա Չ Ա Տ Ր Ե Ա Ն Տ Ի

կարճատև հիւանդութիւնից յետոյ տեղի ունեցած մահը, խնդրում են իրանց ծանօթներին
և յարգողներին ու հանգուցեալի ընկերներին՝ ներկայ լինել հինգշաբթի, ամսի 6-ին, երե-
կոյեան ժամի 7-ին ամբիճը և յաջորդ օրը՝ ուրբաթ, առաւօտեան ժամի 10-ին, յուզար-
կաւորութեան, Սափարեանի տնից (Կանսիկայա փող., № 22) Մողմու ս. Գէորգ եկեղե-
ցին, իսկ այդտեղից Խօջիվանքի գերեզմանատունը:

(Կ. Ո.)

2—2

ԲՈՎԱՆԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ազգեցեղութեան շրջաններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Նամակներ Մօսկվայից. Նա-
մակ Գերբեշնից. Նամակ Գանձակից. Նամակ
Նոր-Նախիջևանից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՌԱԳԻՆՆԵՐ.—ՐՈՒՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թուրքիի տպագրու-
թիւններ:

ԱԶԳԵՑՈՒԹԵԱՆ ԵՐԱՆԵՆԵՐ

Հնդկաստանի քաղաքական նշանաւոր
գործողներից մէկը, սրբ Րիչարդ Տեմպլ
նորերս Լոնդօնի United Service Institu-
տի հաստատութեան մէջ կարգաց մի
գեկուցում Պարսկաստանի նշանակութեան
մասին անգլիական շահերի տեսակէտից:
Տեմպլ համարում է, որ Պարսկաստանը
Զինաստանի նման գտնվում է և պէտք է
գտնվի եւրոպական պետութիւնների ազ-
գեցութեան տակ և ինչիւր միայն այն

Բ Ա Ն Ա Ս Ո Ւ Ր Ա Կ Ա Ն

ԹՈՒՆԻՑԻԿ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թունաւոր է, խիստ թունաւոր այն ճանա-
պարհը, որի վրայից անցնում է մեր հասարակա-
կան կեանքը: Մենք մեզ համար այնպիսի պրին-
ցիպներ և դոգմաներ ենք ստեղծել, որոնք ոչ
թէ նշան են, որ ապրում ենք 19-րդ դարի
վերջին վայրկեանում, այլ ընդհակառակը—մեր
կեանքը իր հասարակական կազմուածքով յի-
շեցնում է մեզ շատ յետադէմ դարերն իրանց
խաւար և անասնական հայացքներով և մարդ
կոչված արարածը ստորագնաց հակումներով:
Նայեցէ՛ք, լուրջ դիտեցէ՛ք, թէ ուր է տանում
մեզ շրջապատող կեանքը և եթէ մեր մէջ կայ
զիտակցութիւն և խղճի արդար ճայն՝ կասէ՛ք—
դէպի անդունդը, դէպի ստորացումը: Է՛մս—ինձ
համար, ուրիշն էլ—ինձ համար, ահա ժամանա-
կակից մարդու նշանաբանը: Անտարբերութիւնը
դէպի ուրիշի օգուտը, տանջանքը, արտասուքը՝
օրընտրէ աճում է ու զարգանում և մի ան-
հրաժեշտ պայման դառնում: Քիչ չեն այնպիսի
թանաքներ, որոնք ոչ թէ մարդկային արժեք
նպատակութիւնն են բարձրացնում ու վսեմ

Պէտք է նկատել, որ վերջին տարիների
ընթացքում Անգլիան աշխատեց մասնաւոր
գաշնակցութիւններ և համաձայնութիւն-
ներ կայացնել շատ պետութիւնների հետ:
Ինչպէս յայտնի է, երեք տարի առաջ Անգ-
լիան համարվում էր կղզիացած, բաժան-
ված եւրոպական պետութիւններից: Մի-
այն մի պետութիւն, Իտալիան, մնում
էր համարաշուշ և դժբաղից Միջերկրական
ծովի ափերում տեղի ունեցած քաղաքա-
կան գործերում: Միւս պետութիւնները
վերաբերվում էին սառն և նոյն իսկ խուչ
զիմարութիւն ցոյց տալով: Այնուհետեւ
Անգլիան անդիպեց մասնաւոր գաշնակ-
ցութիւն կապել Գերմանիայի հետ և վերջ
գնել այն թշնամական զգացմունքներին,
որ սկսել էին երեւալ Ֆեմպայի և Նպրէի
ափերում: Սպանո-ամերիկական պատե-
րապմի ժամանակ Անգլիան կարողացաւ
մօտեցալ Ամերիկայի Միացեալ Նահանգնե-
րին և հաւանական է, որ տեղի ունի-
այդ պետութիւնների մէջ առանձին հա-
մաձայնութիւն: Վերջին ամիսների ըն-
թացքում Անգլիան մասնաւոր գաշնակ-
ցութիւն կապեց Ֆրանսիայի հետ Աֆ-
րիկայի վերաբերութեամբ և Ռուսաստա-
նի հետ Զինաստանի վերաբերութեամբ:
Նի՞թէ դրանց աւելացնենք և այն, որ Անգ-
լիան նոյնպէս համաձայնութիւններ է կա-
յացել Նապոլիայի և Զինաստանի հետ,
կը տեսնենք, որ նա առանձին պայման-
ներով հաշտութիւններ է կայացրել բոլոր
խոշոր պետութիւնների հետ:

Պարսկաստանի, Արաբիայի, Պարսից ծո-
ցի և ամբողջ Առաջաւոր Ասիայի ներկայ
վիճակը անշուշտ առկթ է տալիս, որ եւ-
րոպական պետութիւնները մտածեն նրանց
ապագայի, նրանց ժառանգութեան մա-
սին և զարմանալի է, եթէ ամենակարճ
ժամանակում որոշվին ազգեցութեան շըր-
ջանները այդ բոլոր երկիրներում: Եւ հաս-
կանալի է, այն ազգերը և երկիրները,
որոնք ոյժ և եռանդ չունեն իրանք սահ-
մանելու իրանց դրութիւնը և ապահովե-
լու իրանց առաջնադասութիւնը, ճակա-
տագրական կերպով պէտք է ընկնեն աւե-
լի խոշոր ազգեցութիւնների տակ: Բայց
արդեօք կարող կը լինեն նրանք նոյն իսկ
եւրոպական ազգեցութեան շրջաններում
արթնանալ իրեն կուլտուրական տարբեր
և առաջադիմական դեր կատարել իրանց
շրջանում:

և աննկատելի կերպով տանում է դէպի թշուառ-
այլասեւումն:

Մարդը, բնութեան այս ամենավեճ արարածը,
որ կոչված է արարածներից ամենից սքանչելին
և ամենից կատարեալը լինելու՝ այնքան մասն-
րացել, այնքան փոքրացել է, որ կամ չէ ճա-
նաչվում կամ բացականչել է տալիս—ուս աշ-
խարհակիւլ է... Եւ քանի որ մարդը կապի
առանց իրէալի, առանց վեհագոյն ձգտումների,
քանի նա ուրիշ երկանկութեան մէջ չի գտնի
իր բերկրանքը և ուրիշ դժբախտութեան մէջ
իր տանջանքը՝ նա միշտ կը մնայ փոքր և սոոր:
Ի՞նչը դրեց մեզ այս տխուր տողերը գրելու—
կը հարցնէ ընթերցողը.—կեանքի մռայլ պատ-
կերները ընդամենապէս և Բագուի հասարակա-
կան կեանքը մասնաւորապէս:

Այս նորահալ քաղաքը, այս նոր Սողոմը,
ուր այնքան առատ են հասարակական յան-
ցաքները, ինչքան ինքը նաւթը՝ իր կազմուած-
քով, իր աշխարհայեցողութեամբ և իր կենցա-
ղով մի ծայրահեղ էգոիստի տիպար է ներկա-
յացնում:

Գաւառացին, դուր մարդը կամ աւելի ճիշդն
ասած՝ եւրոպացին, մինչև քաղաք մտնելը,
որի հարստութեան համար հէքիաթային պատ-
մութիւններ է լսել, երևակայում է, որ միաժա-
մանակ պիտի մտնէ մի քաղաք, ուր կը գտնէ
բազմաթիւ հիմնարկութիւններ, բարեգործական

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Ս Ո Ւ Լ

Ամենօրեայ լրագրութիւնը արձագանք է տա-
լիս անհամար մեծ ու խոշոր փաստերին, արձա-
նագրում է կեանքի դժուածքներին մի ամբողջ
կոյտ: Լրագիրը կեանքի բարոյաւոր է, նա գը-
րում է, տալիս է հուժ նիւթ և միշտ միջոց չու-
նի այդ նիւթը մշակելու: Մեծ մասամբ նրա
ստուածը օր օրի վրա լոյս տեսնող, դէս ու դէն
ընկած պատառիկներ են, որոնք լրագրական
միւս նիւթերի հետ կարգացվում են, թողնում
են ժամանակաւոր տղաւորութիւն և ապա, մի
յայտնի միջոց անցնելուց յետոյ, իսպառ մոռ-
ացվում են, անհետանում ընթերցողի յիշողու-
թիւնից: Պատճառը շատ հասկանալի է: Նոյն
իսկ քաղաքական խոշոր դէպքերը, երբ խօսող-
ները յաճախ լինում են թնդանթները, բանակ-
ները, երկար չեն ապրում մարդկանց յիշողու-
թեան մէջ: Համեմատեցէ՛ք այդ դէպքերի հետ
մեր քաղաքների և գիւղերի կեանքը իր մանր
փաստերով, իր մոխրագոյն կերպարանքով, և
միթէ՛ դարմանալ կը թուայ, որ այդ՝ առանց
այն էլ մտքից ընկած, ուշադրութիւնից հեռա-
ցած կեանքը այնքան շուտ է մոռացվում: Եւ
սակայն որքան հետաքրքրական, որքան ուսանե-
լի կը դառնար այդ կեանքը, եթէ նրա տուած
առանձին առանձին փաստերը հաւաքվէին մի
տեղ, դասաւորվէին, լուսաբանվէին մի յայտնի
ուղղութեամբ: Այդ ժամանակ կը ստացվէր մի
վերին աստիճանի ուսանելի, խրատական պատ-
կերաճանդէս, նայողի առջև կանցնէին հարկը
ու մի իրական երևութիւն, որոնք, ճիշդ է, շատ
հասարակ և խաղաղ են, բայց նկարում են այն
ընդհանուր դրաման, որի մէջ թաւալվում է ժա-
մանակակից մարդկութիւնը: Որքան խորհրդա-
ծութիւնների նիւթ կը տար այդ դանդաղա-
կերպ տեսարանը, լոյսերի և ստուերների այդ
անրնդհատ, յաջորդական խաղը: Շատ նիւթ են
կեանքի մէջ տեղի ունեցող այնպիսի պատահա-
րներ, որոնք կրանեն հասարակութեան ուշադրու-
թիւնը, տանջեն նրան այնպէս, ինչպէս, օ-
րինակ, Գրեյֆուի գործը: Եւ սակայն ինչ է
դա, եթէ ոչ պարզապէս մի անարդարութիւն,
որ անում է մարդը իր նման մարդու վերա-
բերմամբ: Իսկ եթէ այդ անարդարութիւնը յան-
ցանք է, որից պիտի զգլի ամբողջ աշխարհը,
հարցնենք մեզ՝ միթէ՛ քիչ կան մեր շրջանում,
մեր չորս կողմում, ամեն տեղ, ամեն անկիւ-
նում դոճեր, որոնք գուցէ Գրեյֆուից աւելի
ողբալի են, աւելի կսկծեցնող: Կան, ի հարկէ,
շատ և շատ կան: Բայց ինչու դրանք այնքան

հաստատութիւններ, ապաստարաններ, թառ-
օններ և այն՝ մոլորիկ ընդհանուր բարոյա-
կանութեան մակերևոյթը բարձրացնելուն նուիր-
ված: Բայց ինչ մեծ հրատաքութիւն, չքանում
են նրա երեւակայած գողտրիկ պատկերները և
նրանց տեղ իսկոյն աչքի է ընկնում Բագուի
ներկայ չոր, անպտուղ և էգոիստ կեանքի հրէ-
շաւոր պատկերը...

Այստեղի թէ ինտելիգենտ և թէ ոչ ինտելի-
գենտը ունի մի իրէալ—հարստանալ, որին հա-
նելու համար միջոցների խտրութիւն չէ գնում:
Նա կարողանում է հանգիստ մտածել իր ու-
կեպատ փառահեղ նմարաններում և՛ այն ժա-
մին, երբ իր դրացին, իր մօտիկ հարեանը հե-
ծում է թշուառութեան բեռի տակ կամ երբ
լուծւել է օրը երեկոյաների լալը կամ որդեկորոյս
մօր քար պատուող ողբը, որ նոյն-իսկ չունի
այնքան, որ մի դադաղ գնէ և իր փայփայած
զաւակին հողին յանձնէ: Նա լուծւել է, կամ տես-
նում է ամենօրեայ կեանքի տրագիկան և ա-
մենայն ստոնարարութեամբ երեւը չուռ է տա-
լիս ու հանգիստ ընում կամ երազում օրընտրէ
աճող միլիոններ...

Տեղական հայ հարուստը պարտք է համա-
րում իր զաւակների անուանով կամ հին հայկա-
կան անուններով կնքել իր հետգնտէ աճող
նաւթահորերը, իսկ այնտեղ, հեռու, ուր արեան
փոթորիկը մշտապէս է, ուր անասնիկ թշուա-

անդայտ են, այնքան հեշտութեամբ սահում, կորչում են հրապարակից: Արդիւնեւս սրանք երևան չեն գալիս մի ընդհանուր ամփոփ պատկերի մէջ: Ուրեմն պէտք է հաւաքել կեանքի դոկումենտները, պէտք է դասաւորել և գիրք կազմել նրանցից: Այնպէս պիտի լինեն այն պարբերական հրատարակութիւնները, որոնք ուշ ուշ են լոյս տեսնում, որոնք ժամանակ ունեն այդ գործը կատարելու և որոնք մէջ ներթել չուտ չէ հնամուտ: Հասկանալի է թէ մենք ներկայիս ունենք ամսագիրներ, շաբաթաթերթեր: Մեզ մօտ ոչ ոք չէ մտածում այդպիսի գործի մասին, մեզ մօտ ամեն մէկը, նոյն իսկ վեց ամիսը մի անգամ լոյս տեսնող ժողովածու—հանդէսը ուղում է առօրեայ հրապարակախօս լինելու: Այնպէս էլ պատճառը, որ մեր մէջ չորսըսով ամսագիր, շաբաթաթերթ չէ երևում: Վերջերս, օրինակ, ռուսաց «Неделя» շաբաթաթերթը և նրա մէջ դուրս գրողներ թէ արտաքին և թէ ներքին կեանքի մի շաբաթվայ պատմութիւնը: Իւրաքանչիւր փոքր ի շատ է լաւ խմբագրվող ամսագիր տալիս է ձեռք մի ամսվայ նկարագրելու: Իսկ այդպէս լաւ խմբագրվողներից մէկը, «Жизнь» ամսագիրը սկսել է ամսէ ամիս տալ նաև դաստակարան կեանքի պատկերը, կազմելով նրան այն փաստերից, որոնք ցրված են դասական լրագրիւններին մէջ: Դա շատ հաճելի նորութիւն է և այն պանօրաման, որ բաց է անում ամսագիրը իր ընթերցողներին առաջ, վերին աստիճանի հետաքրքրական է: Ամենից առաջ զբոլիս է ցոյց տալիս ցեխի, կեղտերի, մերթնութեան մէջ խեղդվող գաւառը իր անվերջ զանգարաններով: յետամնացութեան, անհարկութեան և կատարեալ մտաւոր դատարկութեան մասին:

Եթէ հաւատանք տեղական լրագրիւններին, դաստակարան քաղաքների կեանքի մէջ միտնալիս շատ քիչ բան կայ: Գաւառական լրագրիւններ թղթակցները միաբան խմբով հաստատում են, որ զինանքը հանդարտ և միանման է գնում: Եթէ մի բան սխալփեցնում է գաւառացուն, դա դուրս է կամ թերթի խմբագիրն է, կամ սկանդալը, բաժնեատանը, շահը:

Այդպէս հօ մեր բոլոր գաւառական քաղաքներն են, որոնցից ստացվող թղթակցութիւնները միաբանապէս ողբ են հեծեմանը: Են ինչ ինչ ու ինչ բաներ չը կան այդ պատկերի մէջ, որոնք չը յիշեցնեն մեզ մեր հայրենի իրականութիւնը: Մի տեղ մի ճարտիկ շարքաւորում, որ բախում ու ապագայ դուշախօսի դերն է յանձն առնում ու առատ հունձ է հաւաքում այն թիթեմալի մարդկանց լէզները, որոնք գնում են նրա մօտ, բաց են անում իրանց բոլոր գաղտնիքները և հարստահարվում են ամենայն հաճութեամբ: Մի տեղ անառնուն նամակներ, որոնք դանաղան բաժնեատանը են և տուտ տուրքեր տարածում ամենատարբեր պատահանքով: Դրանց մէջ, ի հարկէ, առաջին տեղն է բռնում այս կամ այն անհաճելի մարդու մասին մասին շինած լուրը, մի զուգուր խարդախութիւն, որին յաճախ զոհ են գնում և լրագրիւնները: Մեր առաջին է և գաւառական մամուլը:

Մենք խորապէս համոզված ենք, որ տեղական մամուլի գործիչները, չէ նայած ամեն տեսակ արգելանքներին և թիրխմացութիւններին, իրանց պտղատու կուլտուրական գործն

են կատարում: Այս բանին վրայ է այն հանդամանքը, որ գաւառական մամուլը, չը նայած այն խիտ ճնշող գործօններին, որոնք ըստով են նրա բոլոր չիւթերը, այսպէս անուանված հրաւար ոյժերից ղեկ մի իրական սպառնալիք է: Բռնել թղթակցին, հալածել նրան—ահա այն աղաղակը, որ այնքան յաճախ լսվում է գաւառում հէնց այդ սպառնալիքի պատճառով:

Այս փաստեր, մէկը միւսից պերճախօս փաստեր: Մեզ մօտ, Կովկասում, գաւառական մամուլը—եթէ համաձայն էք, որ թիֆլիսի մամուլը լինի մայրաքաղաքի մամուլը—շատ քիչ է զարգացած և տեղական թերթերի դերը կատարում են թղթակցիցները, որոնք պակաս խտութեամբ չեն հալածվում հրաւար ոյժերից կողմից:

Այսին, և այն: Վարդապետը դեռ կրտսեր չափ է բարձրացրած, բայց դեռ ինչքի դուրս էր դան, երբ ուղարկվեալ քայլ առ քայլ էր հեռանալ իրողութիւններին և կանոնաւոր դասակարգութեան մէջ: Կը ներկայացնեն ընթերցող հասարակութեան:

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՆ

ХП

Պ ու չ կ ի ն ի ծ ն ի դ ա վ ա յ ր ու մ

«Въ изгнаниѣ, въ горести, въ разлукѣ, Москва, какъ жаждаетъ я тебя, Святая родина моя!»

П у ш к и н ъ

Մոսկվան և Պետերբուրգը, որպէս ռուսական մտաւոր և հասարակական կեանքի երկու նշանաւոր կենտրոններ, այդ երկու մայրաքաղաքը, որ համախմբված են ռուսաց գրականութեան, գեղարուեստի և գիտութեան համարեալ բոլոր ներկայացուցիչները, շատ հասկանալի է, որ այսօր մեծ պատրաստութիւնների մէջ են արժանաւայել կերպով տօնելու Պուշկինի ծննդեան 100-ամեակը: Մոսկվայ Մոսկվայ մի առանձին հպարտութեամբ ու ներքին ինքնագոհութեամբ է պատրաստվում մասնակցելու համառուսական այդ փառաւոր տօնախմբութեան, որովհետեւ ինքն է ազգային մեծանուն բանաստեղծի որդին: Մոսկվայում է աշխարհ եկել և նրա օղով ու ջրով սնվել Պուշկինը: Մոսկվայում են անցել բանաստեղծի կեանքի առաջին տարիները—մինչև 12 տարեկան հասակը: Մոսկվայում է բանաստեղծ-մանուկն ուղարկւում և հրապարակաւ առաջին անգամ լսել իր հայրենի դպեանկի ընթերցումը: Գեղեցիկ ժողովրդական հէքիաթները, աւանդութիւններն ու առասպելները, որոնք յետոյ այնքան ոգեւորել են նրան, այնքան առատ ներթ են տուել նրա գրութեանը: Մոսկվան է եղել այն անդրանիկ խաղաղ օթնակը, որ արքայից պերագրած էր և հանդիս էր դառնում առաջին անգամ երիտասարդ 27 տարեկան բանաստեղծին իր այնքան բազմալիչ ու չարաղէտ կեանքից յետոյ: Վերադարձել է և գրկաբաց ընդունվել իր ծննդավայրում, չեմ օրով փայփայվել իր բարեկամներին ու ծանօթներին չըջանում: Վերջապէս, Մոսկվայի կոյրերի միջիցն է բանաստեղծն ընտրել իր կեանքի ընկերին: Մոսկվայում է նա սիրահար ու սիրավառ պսակվել իր ժամանակի առաջին գեղեցկուհի Գոնչորովայի հետ, որի սիրով ու գեղեցկութեամբ ներշնչված՝ այնքան յաճախ հնչել է Պուշկինի հրաշալի քնարը, բայց այդ կիրք յետոյ, տարաբախտաբար, նոյնպէս իր գեղեցկու-

թեամբ, բոլորովին անմեղ կերպով ու ակամայ պատճառ եղաւ բանաստեղծի աղետալի վախճանին: Պուշկինի մենամարտութիւնը Գանդէսի հետ, ինչպէս յայտնի է, իր կիռջ պատճառով էր, որի վրայից պատուաւէր բանաստեղծն ուղում էր մարքել այն արատը, որ այն ժամանակվայ Պետերբուրգի բաժնաւատէր ու չարախօս արիստօկրատիան աշխատում էր գրողին անմեղ կիռջ անուան վրա...

Ինչ չեն այն քաղցր յիշատակները, որոնցով Պուշկինը կապված է եղել Մոսկվայի հետ: Այն իրողութիւնն է, որ բանաստեղծն իր ծննդավայրին դիմելով բացականչում է.

«Въ изгнаниѣ, въ горести, въ разлукѣ, Москва, какъ жаждаетъ я тебя, Святая родина моя!»

Տասնութներ տարի սրանից առաջ (1880 թ.) Մոսկվայի իր գրկում համազգային շուքով տօնախմբեց հանճարեղ բանաստեղծի հոյակապ արձանի բացումը, որ ներկայումս համարվում է Մոսկվայի հազուադուր և նուիրական գարգբերից միւրէ: Նոյն Մոսկվան, որպէս բանաստեղծի ծննդավայր, այսօր աւելի ևս մեծ ողորութեամբ պատրաստվում է տօնախմբելու իր մեծ գաւառի ծննդեան հարկաւորակը: Պատրաստութիւններն արդէն սկսվել են և նրանք այնքան բազմազան ու բազմաձև են, որ միաւրի թուել այստեղ անհնարին է: Փաղաքային դուստն, քաղաքի բոլոր կրթական հաստատութիւնները, հասարակական հիմնարկութիւնները, թատրոններ, երաժշտական ու գեղարուեստական դպրոցներ, գիտական ու գրականական ընկերութիւններ—բոլորն էլ պատրաստվում են մասնակից լինելու համառուսական նշանաւոր տօնին: Այդ մասնակցութիւնը պէտք է արժանայայտի բանաստեղծի անուան ու յիշատակին նուիրած զանազան բարի գործերով, ժողովրդական դաստիարակութիւններով, մրցանակաբաշխութիւններով, գրականական երեկոյներով, բացառապէս բանաստեղծի երկերից կազմած դրամատիքական և օպերային ներկայացումներով, բազմաթիւ պէս-պէս հրատարակութիւններով: Պուշկինի լուսանկարներ, նրա կեանքին ու գործերին վերաբերեալ ռուսականագիտութիւններ, ժողովածուներ, արձաններ՝ թանգ ու ժամ, շքեղ ու հասարակ, որոնք արդէն օր-օրի վրա լոյս են տեսնում: Մոսկվայի սիրելի և յարգանքի աղբյուր ընդհանուր արտայայտութեան մէջ իր մասնակցութեամբ, անտարակոյտ, առաջին տեղը պէտք է բռնէ Մոսկվայի Ռուս գրասէրների ընկերութիւնը: Կոչված էին արժանաւոր հաստատութիւններ, որն ամբողջապէս կապված է մայրենի գրականութեան հետ և որին ամենից առաւել մօտիկ ու թանկ է այն բոլորը, ինչ որ վերաբերում է ռուսական մտքի ու հանճարի ստեղծագործութեան: Մանաւանդ որ Պուշկինն էլ մի ժամանակ երեսնական թուականներին, ինչպէս երևում է նրա մի նամակից, անդամ է եղել ընտրված այդ ընկերութեան:

Այս օրերս ես աւելի ունեցայ Պուշկինի տօնախմբութեան մասին երկար խօսակցելու ուստաց գրականութեան մէջ յայտնի պրօֆէսոր Ա. Վեսեղովսկու հետ, որը ռուս գրասէրների ընկերութեան փոխ-նախագահն է և մի և նոյն ժամանակ անդամ է ընտրված յիշեալ ընկերութեան կից ներկայումս գոյութիւն ունեցող այն

մասնաժողովի, որին յանձնված է մշակելու բանաստեղծի ծննդեան հարկաւորակը տօնելու ծրագրերը: Յարգելի պրօֆէսորն այնքան սիրելի գտնվեց, որ միաւրի պատմեց ինձ, թէ ինչ պատրաստութիւններ է տեսնում ռուս գրասէրների ընկերութիւնը: «Գեղեցիկ և լայն ծրագրերն շատ ունենք,—ասաց պ. Վեսեղովսկին—միայն այդ բոլորի իրագործումը կախված է ոչ լոկ մեր անձնական եռանդից ու ցանկութիւնից, այլ զանազան հանգամանքներից և նիւթական միջոցներից, որի պակասը զգալի է ընկերութեան համար: Սակայն մենք, ի հարկէ, ամեն ջանք պէտք է գործ դնենք, որպէս զի գրականական այդ մեծ տօնը հանդիսաւոր լինի և միանգամայն արժանաւայել ազգային հուկայ բանաստեղծի անուան, որի հետ կապված է մեր մտքի և գրչի փառքը: Ամբողջ երեք օր է շարունակվելու ռուս գրասէրների ընկերութեան տօնախմբութիւնը—մայիսի 26-ից մինչև 28-ը: Առաջին օրը տօնախմբութիւնը տեղի կունենայ Մոսկվայի համալսարանի դահլիճում, ուր տեղի սրտկան պատճառով ներկայ կը լինեն միայն ռուս գրասէրների ընկերութիւնն ու համալսարանի իրանց ամբողջ կազմով, ուսանողների մի որոշ տոկոսը, տեղական մամուլի ներկայացուցիչները, աչքի ընկնող մասնագիտները, գեղարուեստագէտները և դասական քաղաքների գրական, գիտական ու գեղարուեստական հիմնարկութիւնների պատգամաւորութիւնները, իւր-իւր հրաւիրեալներ ռուս գրասէրների ընկերութեան կողմից: Հրաւեր է ուղարկված նաև թիֆլիսի հայոց հրատարակական ընկերութեան և մենք լրայայն ենք, որ ընկերութիւնն արժանաւայել կերպով արձապահ կը տայ այդ հրաւերին: Հանդէսը կը բացվի գրասէրների ընկերութեան նախագահ արքիեպօս Ն. Ի. Սոսոքովսկու հաւով, իսկ համալսարանի կողմից կը խօսէ պրօֆ. Կիրպիլսկով: Ետոյ կը սկսվի ներկայ երկր պատգամաւորների ուղերձները, ստացված հեռագրիւններ, նամակների ընթերցանութիւնը և այլն: Սերկոյեան մայրաքաղաքի նշանաւոր հիւրանիւններից մէկում նշանակված կը լինի հանդիսաւոր բանկէտ (ճաշկերպ): Նոյն օրն առաւօտեան մեծ շուքով հոգեհանդիս կը կատարվի Պուշկինի յիշատակին Մոսկվայի ամենահոյակապ եկեղեցում—Փրիզի տաճարում, ուր ներկայ կը գտնվեն գլխաւորապէս մայրաքաղաքի բազմաթիւ երկսեռ դպրոցների սաներն ու սանուհիները իրանց վարժապետներով և վարժուհիներով: Այդտեղից այդ մաստաղ սերնդի բազմաթիւ երաժշտական խմբի առաջնորդութեամբ և պսակներ ձեռքին՝ հանդիսաւոր դնացով կը դիմէ դէպի բանաստեղծի արձանը, որ գտնվում է քաղաքի նշանաւոր հրապարակներից մէկում: Այդտեղ, արձանի շուրջ ընդամենը՝ կը խօսվեն ձառեղ, կօնսերվատօրայի աշակերտներից ու աշակերտուհիներից կազմված երգչիկ խումբը՝ երաժշտական խմբի ներդաշնակութեամբ՝ կերպէ օրվան պատշաճ երգեր, դափներներով կը պսակեն արձանը և ապա նոյն հանդիսաւոր դնացով մաստաղ սերնդի կուլտուրի դէպի համալսարանի այնտեղի հանդիսին ներկայ գտնվելու: Սերկոյեղ օրվայ տօնախմբութիւնը, որ նշանակված է Անդուականների ժողովարանի ընդարձակ դահլիճում, աւելի հանրամատչելի կը լինի հասա-

նութեան և միշտ շողջողուն սրի տակ հեծում է մի ամբողջ ժողովուրդ, որի գաւառը լինելու շնորհն ունի և ինքը, անթիւ հաղաթներով որբեր մատնված են սովի և բազմաթիւ զրկանքների, սրանց անուշով նա չարտում է միայն մի բանի կօպէլ և սրանով վերջացնում է այն դերը, որ իր վրա դրել է հայ անուշը: Նա ժլատ է և՛ այն քաղաքի կամ հասարակութեան վերաբերութեամբ, որի մէջ ապրում է ինքը՝ Նա բաւականաւոր է իր ոսկեպատ պատերով, շուք ու զարդարանքով, շուք ու զեղի կեանքով, իսկ թէ դուրսը ապակեմեծ է, ապակեմեծ է նոյն-իսկ և այն օդը, որի միջով ամեն օր անցնում է ինքը, փոխվել է: Անցեք ծովափով. ինչ կեղտոտութեան ասէք կը պատահէք այդտեղ. և մինչ պատրաստ էք օրվայ ծանր աշխատանքից յետոյ մի փոքր խոտակ և թարմ օդ ծծել՝ ձեր ընթերցողները կը կալն այն կոյուղիների զագրելի հոտը, որոնք շարված են ծովափերին, ուր զբօսում է Բագուի, այս ոսկեղեց քաղաքի հասարակութիւնը:

Հայը, որ իր դարաւոր կեանքի ընթացքում ցոյց է տուել իր բուռն սէրը դէպի եկեղեցին և շատ հանրօգուտ հիմնարկութիւնների փոխարէն ամեն մի քայլի վրա կառուցել է փառաւոր վանքեր, «եկեղեցիներ» այստեղ էլ կատարեալապէս աշխատեւած է: Ամբողջ քաղաքում միայն մի եկեղեցի կայ, այն էլ փոքրիկ, հասարակ-

Մտնում էք եկեղեցի և մինչդեռ ուղում էք աղօթել, վերանայ, բարձրանալ առօրեայ կուլտուր և ներխաժ կեանքից, զգալ, որ բացի ոսկեղեցի և անձնական բարօրութիւնից կան և շատ սրբութիւններ ու պարտականութիւններ, յանձնարած այդ քաղաքի ձեռք աշխատելու հասնում են այնպիսի անախորժ և աննեղաշնակ ձայներ, որոնք ձեռք իսկոյն լիջնում են կրկին ներքեւ, ներքեւ, մինչև արդարեւ ներկան և ծանր ու թուրաւոր իրականութիւնը... Ձարմանալ թէ ծիծաղել, ցաւել թէ վրդովվել այս անտարբերութեան, այս յանցանքի վերաբերութեամբ Բագուի միլիոնատէր հայ հասարակութիւնը միջոց չունի մի մշտական կանոնաւոր քառաձայն երգչիկ խումբ պահելու, թէ ժամանակ չունի այսպիսի կարիքների մասին մտածելու: Այնպէս անթիւ են քաղաքի կարիքները. բայց դուրս փողով հպարտ բագուցին արդէն բաւականաւոր է և շատ էլ է համարում այն բարեգործական հիմնարկութիւնները, որոնք գոյութիւն ունեն, սակայն որոնց թիւը մի ձեռքի մասնեղի թիւը չէ անցնում: Այս բագուցին խմբում է առանց զգլելու այն հոտած ջուրը, որին ձեռք չի տայ արքայի դուրսը, և բագուցին գեղարուեստական բաւականութեամբ նստում է այն թատրոնում, որի անունն է ամբար... Մոսկվայ ինչ չէր կարելի անել սրանց մի-

կանքներով, եթէ լինէր մի փոքր խիղճ, գիտակցութիւն, բարի կամք. ինչ հրաշքներ չէր կարելի գործել այստեղ, և շատ հեռաւոր տեղեր, եթէ այն ռուսանոյ երկտարաբնուրները, որոնք իւրաքանչիւր տարի մեծ թւով թափվում են այստեղ՝ ծառայել իրանց կրօնական և նախկին սուրբ երդումներին. երկտարաբնուր, որոնք համալսարանում այնքան շատ են իստեղ իրդանքներ, խորհրդաւոր մտքերի, գիւլի, բանիւր դասակարգի շահերի մասին և որոնք, աւանդաբար, աղայի մօտն են վազում և ճարգիւնաւոր պաշտօն խնդրում, և ձեռք բերելուց յետոյ, իրանք էլ են սկսում մի աղայ դառնալ և այն ժամանակ միտա բարև համալսարան և իր հրապարակ զնորդներն ու իշխողութիւնները:

Այս ամիսներն է ձուլվում հարստաւալու զաղապարի հետ, որ նոյն-իսկ տղետ աղայից էլ աւելի ծծող և աւելի փողաժող է դառնում: Ա. Բագուցին, որ իր մէջ պիտուական է ինտելիգենտ տարրի անաղին տոկոս, ոչ մի կօպէլով չէ մասնակցել երկու խոշոր գրական գործիչներին—Վաֆֆին և Գաժաւ-Գաթիպային յիշատակը յաւերժացնող մահաբճանների կառուցման գործին: Այդ հրէշաւոր և բնորոշ փաստից յետոյ արդէն կարելի է դարձաւոր կապել, թէ համալսարանը ինչ չափով է մասնակցում նա մեր միւս հասարակական-ազգային գործերին:

Այս ամիսներն էլ փորձեցէք ապրել, ապրել ձեր մեծաւորի, ընկերի, թշուառի, տնանկի, աղքատի համար, փորձեցէք ամբողջ ուրիշ վիշտը, սրբել տառապեալի արտասուքը, դուրս գալ շրջապատողների կարիքը, առողջացնել ընդհանուր ցաւերը և դուրս կը դգաք: Կը համովեք, որ դրամով աւելի մեծ և հոգեկան բաւականութիւն ստացած կը լինէք, բան անսպասելիները դիմելով ու ոսկին կուռք դարձնելով—մի թուրաւոր ճանապարհ, որ տանում է դէպի աշխատեւում, դէպի ոչնչութիւն, դէպի անխուսափելի հասարակական մահ:

Արշ. Յարութիւնեան

Բագու

րակութեան համար Այդտեղ հանդէսը կը բա-
նայ պրօֆեսոր Վեներօֆովին իր մի ձառով, ու-
րի նիւթն է լինելու Պուշկինի և եւրօպական
պոէզիայի: Կը խօսեն նաև ուրիշները: Սրե-
կոյեան արդէն տոնակալմանը և նոյն դա-
նիւնում կը կայանայ գրական-երաժշտական ե-
րեկոյթ՝ մասնակցութեամբ Մոսկովայի կայսե-
րական թատրոններէ դերասաններէ ու դերա-
սանուհիներէ, որոնք կը կարդան և կերպեն
բացառապէս Պուշկինի երկերը: Նոյն տեսակ
հանդէսներ և նոյն դանդաղութեամբ տեղի կունենան
նաև երրորդ օրը՝ թէ ցերեկը, թէ երեկոյեան:
Բացի այդ բոլորէն, ուստի դրասէրներէ ընկե-
րութիւնը սարքում է երկու ցուցանահէս, ու-
րոնք կուլկերն են «УШНИКОВЫЙ ВЫСТАВКА» — մէկը
«Պատմական», իսկ միւրը «Բնականագիտական»
դասանակներով: Զոյն և փառաւոր է լինելու մա-
նաւանդ «Պատմական թանգարանում» բացված
ցուցանահէսը: Այդ ցուցանահէսներում ժո-
ղովրդական կը լինեն Պուշկինի ձեռագիրները, նրա
և նրա ամբողջ տոճի տեսակ-տեսակ կենդա-
նագիր պատկերները, նրա երկերի բազմազան
ամենաշին և ամենատար ցատարակութիւնները,
նրա ժամանակակից գործերի ու գործողների
պատկերները, պարբերական հրատարակութիւն-
ները, ուր երբեք չէ կամ աշխատակցել, կամ գո-
վաբանելու ու պախարակելու է բանաստեղծը,
զանազան տեսարաններ Պուշկինի բնակած վայ-
րերէն և այլն: Մի խօսքով՝ հանդէսը դրված կը
լինի այն բոլորը, ինչ-որ ուղղակի կամ կողմ-
նակի կապ ունի բանաստեղծի ամբողջ կենսոյի
ու գործունէութեան հետ: Ցուցանահէսները
կը բացվին տոնակալութիւնից մի երկու շա-
բաթ առաջ և յետոյ էլ բաւական ժամանակ
բաց կը մնան, որպէս զի ժողովուրդը միշտ ու-
նենայ ամեն բան լաւ տեսնելու և, որքան կա-
րելի է, մօտից ծանօթանալու իր մեծանուն բա-
նաստեղծի հետ, որը միշտ բարձրաձայն երգել
է Տայրենի երկերին:

Да здравствует солнце, да скроется тьма!
Ալ. Մատուրեան

ՆԱՄԱԿ ԳԵՐԲԵՆԴԻՑ

Ապրիլի 24-ին

Մեր լրագրութեան մէջ և թէ մասնաւոր խօ-
սակցութեան ժամանակ յաճախ լսում են զան-
գաոնիք Բագուի կենսոյի: Գաւառացի լինոն-
ընդունը մի առաւելու դարձողով է խօսում
բազմազանների մասին, թէ զրանց խօսակցութեան
միակ նիւթը ֆոնտանն է, «վիշկան» է, «մալոն-
կան» է ու հազար ու մի այսպիսի բաներ, թէ այդ
բազմազան միմեանցից գողանալը, անձարին
նեղելը, հարստահարելը սովորական երևոյթներ
են դառել, թէ այդ բազմազան տունկի նման
աճում են զանազան մակերեսներ, բան սարքող-
ներ ու օյնբաղ միջոցներով փող գլխոյներ: Սթէ
այս բոլորը ճիշդ է, ապա ամօթ, հազար ամօթ
տեղական մտածող, հասկացող դասակարգին,
որը ներկայ է այդ բարոյական անկմանը և չէ
բողբոցում չարիքի դէմ: Թողնենք Բագուն: Նա
մեծ արդիւնաբերող քաղաք է, հետեւապէս նրա-
նում անօրմալ երևոյթներ չատ կը լինեն: Այսպ
նչ կասէ մեր Վերքնդին, այն կորած, մոլոր-
ված Վերքնդին, որի անունը միմիայն աշ-
խարհագրական ձեռնարկներին է յայտնի:

Սեպտեմբեր Դերքնդը ևս պատրաստվում է
մանկ այն միջոցով մէջ, որի մէջ սկսել է
փոխ Բագուի հասարակական կենսոյ: Սկսած
այն օրից, երբ Դադոսանի մի քանի բէկերի
ձեռքից դուրս եկան այն հողերը, որոնց տիրա-
պետութիւնն նրանք ապրիլին կերպով, Վերքն-
դում սկսվեց մի տեսակ տեղային շարժում:
Մարդիկ սկսեցին մեջլիսի նման լըծբըծալ այդ
հողերի շուրջը ու ՅԱՅՅԵԱ-ի տուտը մինչև եր-
կնք հասաւ: Ահա այդ գէպերից յետոյ, մեր
Վերքնդը խօսակցութեան նիւթն էլ վերայի-
ջնալ նախաձեռնողներ են դարձել: Թէ տանը, թէ
փողոցում, նոյն իսկ եկեղեցում յաճախ լսում
են «ՅԱՅՅԵԱ» բառերը: Վանայք
նոյն իսկ լսելով ուշադրութեամբ հետևում են
աղանակից գործերին: «Քը մանաղ, Մանան
բալ, լալ ըս, Գեաֆարը մօտանալ է խօսար:
— Էա, ըր մանաղ, մարմն: Ամենը էլ ՅԱՅՅԵԱ
ընք տուաւ: Ո՛վքեր են ՅԱՅՅԵԱ տուողները: Բոլոր
այն մարդիկ, որոնք ոչ փող ունեն, ոչ ուսում,
ոչ գիտութիւն և որ ամենից գլխաւորն է, ցան-
կութիւն էլ չունեն շահագործելու այդ հողերը:
Դրանց միակ ձգտումն է օգուտ քաղել վայրկեա-
նից ու ապագայում մի բանի կօպի գլխի, ծա-
խելով իրանց իրաւունքը իսկական շահագոր-
ծողին: Սա արդէն ոչ առևտուր է, ոչ էլ ար-
դիւնաբերութիւն, այլ հեշտ միջոցով փող գողնել:
Ինչ էր հրամայում, պատուարներ անուանենք
այդ սպիկուլիւրային: Մեր վաճառականը միշտ
այդպէս է, նա չէ սիրում զինվել ուսումով, զի-

տութիւնով իր գոյութիւնը պահպանելու համար:
չէ սիրում նոյնպէս խմել, միանալ, հաւաքա-
կան ոյժ կազմել, որ ընկերական ոյժերով կա-
րողանայ մի գործ սկսել, այլ ամեն մի անհատ,
մի փոքրիկ դուռնար գրպանը դրած, աչքերը չորս
արած՝ սատկած էլ է պտուղ, որ նախնեք
բաշի:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ապրիլի 21-ին

Լրագրութեան կարգում ենք շատ անգամ, թէ
տեղացի հայերի ձեռքին են գտնվում և՛ վաճա-
ռականութիւնը, և՛ արհեստը, և երկրագործու-
թիւնը և այլն. իսկ թուրքերի մասին էլ ասում
են թէ նրանք տեսնելով, որ իրանց ձեռքում
ոչինչ չը կայ, ապրելու համար աւազակութիւնն
են ընտրում միջոց: Միշտ արդարացիում է
նպատակը: Որ մեր հարևան թուրքերը սովոր-
չին արհեստներով պարագել, որ նրանք չեն
կարող տանել նստակեց կենսոյ, որ կողոպ-
տելը սպանել և արհաւիրել ըստ թիւն է
ու պարծանք, դա փաստ է: Ի՞նչ կասէք, թէ
ասեմ, որ նրանց արհեստաւորն էլ գող է և
գողակց:

Ամսիս 26-ին, մի թուրք Ս. դալիս է և յայտ-
նում ոստիկանատանը, երեի նախագահներ
խիտ հրամաններ արգելութեան տակ, որ ա-
ւազակ Սոյիւնը (դարբին և լաւ «ուստայ») զրո-
վում է իրանց տանը, Բաղմանարում: Իսկոյն
ոստիկանապետի օգնականը մի քանի մարդ-
կանցով հասնում է և տեղիւնտեղը բռնում նրան:
Այս արհեստաւոր աւազակի մօտ են գտնում
զերմանացիներից խմած իրերը, որ ճանաչում
են զերմանացիները: Նրա մօտ են գտնվում
2—3 տարվա դողացած իրեր: Այս աւազակից
պահանջում են ցոյց տալ գործակիցներին, և
նա ցոյց է տալիս երկու ուրիշ թուրք. բայց
զերմանացիները ասում են, թէ դրանք չեն,
ուստի արձակում են: Այս աւազակին բռնելով
պէտք է եզրակացնէք, որ անցեալ անգամ
«Մշակի» մէջ յիշված 3 աւազակներից մէկը
սա պէտք է լինի. բայց ոչ. սա նրանց պահա-
պան է և մասնաւոր մանր դող: Ինչպէս ե-
րևում է, սրան են պահ տուել մեր իշած 3 ա-
րիւնաբեր աւազակները իրանց աւարը: Ահա
թէ ինչից է երևում, որ սա չէ եղել այն 8 հո-
գուն կողոպտողը: Մինչդեռ սա բռնված է լի-
նում, յանկարծ լսում ենք, թէ Փիւր դիւղի ան-
ուսում 3 ձիււոր բռնում են մի խեղճ դիւ-
ղացու, որ այրելու փայտ էր կտրում իր տան
համար, մերկացնում են և ձեռքի 1 ր. 60 կօ-
պէկը խլում: Գիւղացին սկսում է լաց լինել,
թէ մի տղայ ունեւ տանը անդամալոյծ և մի
ծեր մայր. նրանց պահողը և կերակրողը ես
եմ, խղճացե՛ք ինձ, մի սպանե՛ք: Աւազակների
սիրտը այս անգամ գութ է ընկնում, յետ են
տալիս 1 ր. 60 կօպէկը և ստիպում, որ իրանց
գիւղի հարուստների անունը ասէ. սա էլ ճա-
րահատեալ ասում է. ապա բաց են թողնում
գիւղացի փայտահատին: Նոյն օրը Փիւր գիւղից
գողանում են 4 ձի:

Չասկից մինչև այսօր Բանանց և Փիւր գիւ-
ղերից (սրանք են յայտնի մեղ) գողացվել է 10
ձի և ձորի, որ մեր գիւղացիների միակ հարստու-
թիւնն է կաղնու: Ուրեմն պարզ է, որ այս
բռնված աւազակը նրանց լիւց չէ, միայն գո-
ղակից է:
Պէտք է աւելացնեմ, որ այս աւազակների
սանձաբձակ կերպով գործելուն աւելի նպաս-
տում է այն հանգամանքը, որ հրամայված է
զենք չը պահել, տեսածը խօսել խլում են: Ան-
ցեալ օրը ոսկաւանդաւորի մի տղայ, ատրճանակը
չուլի տակին կապած՝ անցնում էր բազարով:
բազարիւրը չը գիտեմ ինչպէս նկատեց, իսկոյն
եկաւ և խլեց. հիմա ասացէք խնդրեմ, ինչ կա-
րող է անել այդ մարդը, եթէ նոյն իսկ մի դա-
ւանակաւոր դուրս գայ նրա առաջ ճանապար-
հին:

Մի քանի օր շարունակ անձրև գալոյ յետոյ եղա-
նակը նորից սկսեց պարզվել. արևը սկսեց այրել
բուսականութիւնը: Ջրաբաշխներն էլ յուսահատ-
վել են. նրանք ասում են, չորացածը չորացել է,
պէտք է աշխատենք դայալներին ջուր տալ, որ
գոնէ նրանք պահպանվին չորանալուց: Սթէ
անձրև տեղաք, լաւ հունձ էր սպասվում:

Մ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

Ապրիլի 26-ին

Երէկ, ապրիլի 25-ին, մեր յայտնի տնօր պ.
Ն. Շահաբանդը Նոր-Նախիջևանի ակաբանոցի
դահլիճում տուեց մի կօցեցութիւն: Նա արդէն մի
չաբաթ է, որ այստեղ է: Եկեղեցում երգեց
խմբի հետ և սակայն այն հասարակութիւնը, որ

եկեղեցում այնքան նրանից դո՛ւ մնաց, զմայլած
նրա ձայնից, չայցեցեց նրա կօցեցերը. դա՛-
նի՞ն համարեա դատարի էր: Մեր ժողովուրդը
դեռ այնչափ խալ է, որ թէ Աղաթան, թէ
Շահաբանդ, թէ Լուիս Տրեշտակ իշած երկրքից՝
պիտի տոնակները իրանք ցրվին, որպէս զի
ժողովուրդը բարեհաճէ այցեցել ներկայացումը
կամ նուագահանդէսը: Պ. Շահաբանդը չէր
ցրվել իր տոնակները, իսկ եկեղեցում հօ լսել
էինք նրան ձրիաբար. հայը այնչափ սիրում է
ձրիաբար հաւնել մուրաղին: Պ. Շահաբանդը
մէկ ուրիշ սխալ էլ արել էր, նա չէր հրաւիրել
պ. Փերեանից ջոկ սիրողներ: Պէտք է ասել,
որ մեղանում ամեն մի սիրող ունի շատ աղ-
գակահներ, խնամիներ, բարեկամներ: Սթէ մի
սիրող մասնակցում է, իսկոյն նրա տասը աղ-
գակահները, ծանօթները, հարեանները գալիս
են ներկայացման. եթէ հրաւիրէք երկու սի-
րողներ, դուք կունենաք արդէն քսան թատե-
րասէրներ, իսկ եթէ սիրողների թիւը հաւնի
տասի, արդէն դուք ապահով էք, որ հարիւր
տոնակներ կը վաճառէք: Պ. Շահաբանդը լաւ
էր արել, որ միւսներին նման չէր ցրվել բարե-
կամների ձեռքով տոնակներ: Իսկ մենք երբէք
գնահատած չենք մեր տաղանդները և միշտ
բարոյեղ ենք գնա մեւել, արի սիրեմք...

Այնուամենայնիւ այն փոքր ժողովուրդը, որը
ներկայ էր նուագահանդէսին, սիրով և ջերմ
ընդունեց համարելի երգչին, որի ձայնը բոլո-
րիս վրա շատ լաւ տպաւորութիւն թողեց:
Գր. Չախուշեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, մայիսի 2-ին

Մայիսի 2-ին Մագդա Նէյմանի գրքի «ԱՐՄԱՅՈՑ»
վերնագրից, ես գնեցի Թիֆլիսում և դէպի Բա-
թում գալով, ճանապարհին կարդացի: Սա եր-
բէք չէի կարող երեակայել, որ մեր հայերիս
մէջ կարող են նոյնպէս լինել զանազան վայրա-
հանքեր և այն էլ այդ աստիճան ըստմեկի,
ստոր, ինչպիսին ցոյց տուեց իրան պ. Նիկո-
ղոսով այդ գրքի մէջ: Այո, այդպիսի հացկա-
տակներով են ճանաչում մեզ զանազան Սու-
վորիները:

Կարդալով «Մշակի» 75 համարում «Միայն եր-
կու բուրբի» յօդուածը, միացնում եմ իմ խորին
զրուանքը յօդուածագրի հետ դէպի այն դարչելի
և անամօթ արարածը, որ իր երկու բուրբիների
համար յանդգնել է այդպիսի վերնագրով մար-
դիկ խաբել: Հէնք ճիշդ այդպիսիների յատկու-
թիւնների համար է, որ մեզ հայերիս ասում
են օտարները, էլ ինչիւ ենք զանգատուում:

Բաթումցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւալ համարը, Թագաւոր Կայսրի
Միւղեան տօնի պատճառով, վաղը, ուրբաթ, չի
հրատարակվի, այլ լոյս կը տեսնի շաբաթ, մայի-
սի 8-ին:

Մեզ հաղորդում են, որ ներկայ աշնան Կա-
խիթում պէտք է տեղի ունենայ գինեգործ-
նեւրի ժողով, ընկելու զինգործութեան և այ-
գեգործութեան վերաբերեալ զանազան գործնա-
կան խնդիրներ: Ներկայումս մշակվում է ժողո-
վի պարագմունքների ծրագիրը:

Ստացանք Վ. Լ. Ն. Նիկիւի չի «Два вежливых
парства пришло» բրօշուրը, որ կարդալու է Պալ-
լենկովի հանրամատչելի գիտական գրադարանի
ինստիտուտի գրքեր: Բրօշուրը, որ բաղկացած է
96 փոքրագրի երեւոյթից, պարունակում է բաղ-
մաթիւ պատկերներ, թիւով 93, որոնք աւելաց-
նում են գրքի հետադրբերութիւնը: Բրօշուրը
գրված է հասկանալի ոճով և լեզուով: Հրատա-
րակված է Պետերբուրգում ներկայ 1899 թ. ին
և արժէ 25 կօպէկ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, թէ
ի նկատի ունենալով, որ հողեր վարչութեան
ուսումնաբաններում բեֆօրմներ և նոր կանոնա-
դրութիւն են մտցնվելու, ուսումն աւարտած
սեմինարիստները, ասում են, կորցնում են այժմ
իրանց ունեցած իրաւունքները՝ մտնել Վարչա-
վայի, Իւրիւրի և Տօմսկի համալսարանները:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նահանգի մի
քանի գիւղատնտեսներ փորձեր են արել ծառե-
րի որդիներին կոտորելու մի խառնուրդով, որը
կազմված է Բորօֆի հեղուկից, Պարիզի կանաչից
և կրից: Այդ խառնուրդի մի փոքր քանակու-
թիւնը, խառնած մեծ քանակութեամբ ջրի հետ,
տալիս է մի հեղուկ, որով սրտիւն են ծառերը
և աշող կերպով կոտորում որդիներին:

Թիֆլիսի մէջ գտնվող աստրո-ունդարական
հիւպատոսը մի քանի ժամանակ առաջ հրաւեր

էր կարդացել Կովկասի գիւղատնտեսներին յայտ-
նելու՝ թէ որտեղ կայ մ ու ս կ ու ս ր մ մ տ
կոչված բոյսը և ինչ ձևով կարելի է նրան ձեռք
բերել: Կովկասի գիւղատնտեսներից պատասխան
չեղաւ. բայց Միջին-Ասիայի Կովկասի քաղաքից
մի պարսն այս օրերս հաղորդել է Կովկասեան
Գիւղատնտեսական ընկերութեան, որ նա ունի
իր մօտ 25 պուղ և կարող է ներկայացնել մին-
չև 200 պուղ այդ արմատից: Հետաքրքրական է
լինաւ, թէ արդե՞ծք մեր երկրում գործածու-
թեան մէջ է յիշած բոյսը:

Ժողովրդական լուսաւորութեան միխստորը,
«НОВОСТ» լրագրի ասելով, մօտ ժամանակնե-
րումս հաղորդել է բոլոր ուսումնաբանական
չըջանների հոգաբարձուներին, թէ կառավարչա-
կան սենատի բացաւորութեան համաձայն, քա-
ղաքային դպրոցների ուսուցիչներին և ուսուց-
չուհիներին արձակուրդ տալը կախված է ոչ թէ
քաղաքային վարչութիւնից, այլ նրանց անմիջա-
կան վարչական իշխանութիւնից:

Թիֆլիսում չորս օր շարունակ գալիս է անձրև
և դեռ շարունակվում է: Ցանքները Թիֆլիսի
գաւառում և Բօրչալուրի գաւառներում լաւացել
են և խոտանում են աշող հունձ:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ծարբարի
«Երևուս Գրիստոսի կենանք» աշխատութիւնը, որ
թարգմանել է հայերէն Գ. Բաճանայ Տէր-Գա-
րիէլեանից: Գրքը բաղկացած է 520 մեծադիր
երեսներից և պարունակում է իր մէջ հեղինակի
մի ընդարձակ առաջաբան: Գրքը տպված է
Թիֆլիսում ներկայ 1899 թ. ին և արժէ 2 ր.
50 կօպէկ:

Ժողովրդական լուսաւորութեան միխստորու-
թիւնը որոշել է ներկայ տարվա լույսի 1-ից
Խաբարովսկում բանալ վեցդասնան բէալական
դպրոց, առևտրական բաժանմունքով: Բոլոր լի-
նեկի ծախսերը կընդունի իր վրա արքունական
զանձարանը:

Մցիսիթի վրաց եկեղեցու վերանորոգութեան
համար Գ. Արաֆիւրեան ուղարկել է Թիֆլիսի
քաղաքային ուղարկային 300 րուբլի՝ տեղ հաս-
ցնելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻՍՏԻՑ

Տրապիզոն, ապրիլի 18-ին

Մի քանի օր առաջ առաջնորդարանի տեղա-
պահի հրաւերով երեսփոխանական ընդհանուր
ժողով գումարեցաւ: Օրակարգն էր իրար տես-
նել, խօսել և կարծիքներու փոխանակութիւն
ընել. և պէտք է չնորհաւորել այն 17 երեսփո-
խանները, որոնք բարեհաճեցան այս չոք օդե-
րուն *), լոկ ազգային պարտականութիւնէ թե-
լաբոված, անձամբ պատասխանել սրբազան հօր
կոչին: Ուսմը նկատեցին թէ երեսփոխանական
ժողովը օրինական չէ, որովհետև դէպքն յե-
տոյ երեսփոխաններու ընտրութեան և փոփոխ-
ման սահմանադրական հրահանգները ճշդու-
թեամբ գործադրված չեն: Երկու խորհրդակ-
ցութիւնէ յետոյ, ամենն ալ ստիպվեցան այն
երեսփոխանները հրաժարվին և երեսփոխանա-
կան կազմը նորից ընտրվի. ընտրեցին 5 հո-
ղուց մի յանձնաժողով, որ ընտրութիւնները
փութացնէ: Ցանձաժողովը գործը կը սկսի վար-
չութիւնէն պաշտօնապէս ընտրվել վերջը:

Վերջապէս Ապրիլեան որբաղանի Վան եր-
թալու նշանները երեցան. այսօր երէկվանին
կրկնութիւնն է կրսն. եթէ աստղաբանական
հաշուով սխալ համարուի այդ, գոնէ աստուածա-
բանական իրականութեամբ ճիշդ է: Մեծ-մար-
դարէն իր կարապետը ունեցաւ, այժմ ալ Ներ-
սէս եպիսկոպոսի Կարապետ-փորձաւորը տես-
նելու բաղդը մենք ունեցանք, սա տարբերու-
թեամբ որ նա ալ մեզ պէս թերահաւատ է և
10 օր է մեզ հետ կը սպասէ սրբաղանի գալուն:
Պէտք է խոստովանել, որ Ապրիլեան եպիսկո-
պոս տրապիզոնցոյ մօտ միշտ յարգանքը կը
յիշուի. իբր վարչական մարդ եթէ պէտք եղած
կորով կը պակսի իրեն, ունի անկեղծ ժո-
ղովրդասիրութիւն մը, որ ցոյց տուաւ տեղա
առաջնորդարանի տեղապահ հեղած ժամանակ:
Համարեա միակ առաջնորդի տեղապահն էր, որ
խղճի մտօք այցելեց չըջակայ գիւղերը, դուրս
հանեց մի շարք զեղծումներ, քահանայներուն սան-
ձը քաշեց, մի քանի գիւղական դպրոցներ հիմ-
նեց ուսում տուաւ, ամբարցու առաջնորդարա-
նի բարոյական իշխանութիւնը հեռաւոր գիւ-

*) Ձերմաշտիկը ստուերէ մէջ 30 անգամ հեռու է:

Տեղացի